600.0141.19.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2017 թվականի №141Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի №255Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի ապրիլի 6-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 18-ի «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №255Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ՄԱՍՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրա-կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0403 լիցենզիայի պայմանների՝
   1) 3-րդ կետում «մինչև 2018 թվականի մարտի 22-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի ապրիլի 19-ը բառերով».
   2) 7-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1169 մ և 1133 մ,

2) հաշվարկային ելք՝ 4.7 մ³/վ,

3) հաշվարկային ճնշում՝ 33.2 մ,

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 1248 կՎտ:».

«9. «Վարդանանց» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1250 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ ՇԱ 30-Հ-40, 350 կՎտ, 2011թ.,

2) գեներատոր №1՝ ACD, 350 կՎտ, 1991թ.,

3) հիդրոտուրբին №2՝ ՇԱ 30-Հ-40, 350 կՎտ, 2011թ.,

4) գեներատոր №2՝ ACD, 350 կՎտ, 1991թ.,

5) հիդրոտուրբին №3՝ ՇԱ 30-Հ-40, 350 կՎտ, 2011թ.,

6) գեներատոր №3՝ ACD, 350 կՎտ, 1991թ.,

7) հիդրոտուրբին №4՝ PO-35-Г-30, 300 կՎտ, 2015թ.,

8) գեներատոր №4՝ ГС-200-6У3, 200 կՎտ, 2001թ.:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի մարտի 10-ի №652-2362 գրությամբ ներկայացրած №ՀԲԵՆ17/20-46 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած հինգ հարյուր հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք. Երևան
19 ապրիլի 2017թ.
ժամը 16⁰⁰